

Title: TOUGH SHOES FOR A TOUGH TRIP

by Dr. w. euGene Scott, PhD Stanford University,
Preached at the Los Angeles University Cathedral
Copyright ©2007, Pastor Melissa Scott; all rights reserved

Վերնագիր. ԱՄՈՒՐ ԿՈՇԻԿՆԵՐ ԴԺՎԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

Դր. Ժենե Սքոտի կողմից Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր,
Քարոզվել է Լոս-Անջելեսի «Յունիվերսիթի կաթիլոթ»-ում
Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են
(Բոլոր աստվածաշնչյան մեջբերումները կատարված են Աստվածաշնչի Արարատյան թարգմանությունից)

ԱՄՈՒՐ ԿՈՇԻԿՆԵՐ ԴԺՎԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

Ինչ որ ես անում եմ, ունի իր մեթոդը: Ես մեծացել եմ մի եկեղեցում, որը նորմալ եկեղեցիներից չէ: Երբ ես տասը տարի առաջ եկա այս քաղաք, ես ասացի, որ եթե ուզում եք մեկ ուրիշ եկեղեցի հաճախել, քայլեք ցանկացած փողոցով և ձեզանից չի պահանջվի շատ թաղամասեր անցնել, մինչև գտնեք մեկը: Այս վերջին տասը տարիներին ես նաև ասել եմ, որ դուք կարող եք ունենալ նոր հովիվ հենց հաջորդ կիրակի: Պարզապես գնացեք ուրիշ եկեղեցի: Ինձ համար միշտ հետաքրքիր է, հատկապես քաղաքի կենտրոն իջնելուց հետո, հետևել այն մարդկանց, ում այդտեղ են բերել գովազդներն ու այլ բաները: Նրանք հետաքրքրությամբ գալիս են և լսում «Կրակի մեծ գնդերը»:

Հասկանում եք, տարիներ շարունակ ավանդական եկեղեցում ես հետևել եմ, թե ինչպես են մարդիկ կիրակի օրը օգտագործում հուզական մաքրագործման համար՝ դրսևորելով նյարդային վարքագիծ. մի բան, որը եթե անեին փողոցում, նրանց կձերբակալեին: Ես հետևել եմ այդ մարդկանց, որովհետև նրանց աստվածաբանությունն իրենց այնպես աննորմալ է դարձրել, որ չեն կարողանում մասնակցել այս կյանքի ցանկացած ուրախությանը: Եկեղեցական ծառայությունը վերածվում է անհեթեթ հուզական մաքրագործման, երբ Աստծուն երկրպագելու անվան տակ նրանք հուզական «գինարբուքի» մեջ են ընկնում: Եվ նրանց եռանդի մեծ մասը վատնվում է գոհասեղանի առջև ողբաձայն երգելով, որից հետո շաբաթվա մնացած մասը նրանք վերադառնում են իրենց աննորմալ մակերեսային հոգևոր վարքագծին: Եկեղեցիները ստեղծում են վանքեր այսպես կոչված «կանանց միսիոներական ընկերություններով», որոնք ավելի շատ նախատեսված են անձնավորություններին բամբասանքի

միջոցով վարկաբեկելու, քան կտորներ կտրելու և միսիոներների երեխաների համար մզոցակած վերմակներ պատրաստելու համար: Եվ իմ եկեղեցիներից մեկում շաբաթվա խոշոր իրադարձություն էր համարվում երիտասարդական հավաքույթը, որի ժամանակ երիտասարդները կարող էին զբաղվել այնպիսի էկզոտիկ բաներով, ինչպիսին է «Պտտել շիշը» խաղը:

Գերբնական նշանակում է «ավելի բնական»: Քրիստոնեությունը քեզ տարօրինակ չի դարձնում: Ինչպես ես հաճախ ասում եմ, քեզ հարկավոր չէ գետնից քառասուն ոտնաչափ բարձր սավառնել, որպեսզի լինես հոգևոր: Քրիստոնյաները պետք է լինեն աղ, որը պահպանում է այս երկրագունդը: Սա համալսարանական դասարան է, որը հանդիպում է շաբաթը մեկ անգամ, և քանի որ դու ներկա ես գտնվում այստեղ, դա չի նշանակում, որ դու դառնալու ես ավելի լավ քրիստոնյա: Դու կարող ես գնալ երկինք՝ երբևէ չմտնելով եկեղեցի: Ինչ-որ ժամանակ ինչ-որ հովիվ քեզ կասի, որ քրիստոնյա լինելու համար պետք չէ, որ գնաս եկեղեցի: Եկեղեցին այն ժողովուրդն է, որը պատկանում է Տիրոջը և գնում է Տիրոջ տուն: Պարզապես պնդիր խոստումը. «Որտեղ երկուսը կամ երեքը հավաքվեն Նրա անունով, Նա նրանց մեջ է»: Եվ ամենանշանակալից բանը, որ Սուրբ Հոգին մեզանում կարող է անել, մեր սրտերի մեջ Աստծո Խոսքը այնպես բորբոքելն է, մինչև որ լույսը տեսնելու կարողություն ստանանք, ինչպես նաև քարոզչին այնպես բորբոքելը, մինչև որ նա կարողանա բացել Աստծո Խոսքը: Այս ամենի արդյունքը կլինի այն, որ կգա հավատք, որովհետև «Հավատքը լսելուց է, իսկ լսելը՝ Աստծո Խոսքից»:

Եկեղեցական ծառայությունները չպետք է լինեն պարփակված տարօրինակ ընկերություններ իրենց փոքրիկ պատարագներով, որտեղից հեռանալուն պես այն, ինչ անում ես կիրակի օրը, երբեք ոչ մի տեղ կապ չի ունենա նրա հետ, ինչին բախվում ես շաբաթվա ընթացքում: Եվ հավանաբար նույնչափ վատ աստվածաբանություն կա այդ եկեղեցիներում կատարվող հիմար երգերից մի քանիսի մեջ, որոնք ավելի շատ բան են արել քրիստոնյաների մտքերը աղավաղելու գործում, քան աշխարհի ողջ ողբնուրը: Օրինակ՝ «Պահե՛ք ամբողջ, ես գալիս եմ, պատասխանը թափահարելով ե՛տ ուղարկեք երկինք: Քո շնորհքով մենք կանենք»: Անհեթեթություն:

Հիսուսն ասաց. «Ես կկառուցեմ իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան»: Ինձ մի տվեք այդ «հաստատեք եղբայրներին և հուսացեք կենդանի մնալու համար» երգերից որևէ մեկը: Եկեղեցին հարձակողական դիրքում է, այլ ոչ թե պաշտպանողական: Այդ ամենը դատարկաբանություն է: «Նահանջի՛ր, դժո՛խք: Մենք առաջ ենք շարժվում թիկունքից»: Ժամանակակից քրիստոնեական այդ փոքրիկ հիմար երգերից է «Եթե ուրախություն ես ուզում, սկսի՛ր ցատկոտել» երգը: Ես հիշում եմ, որ

վերջին եկեղեցական ժողովին, որին ես մասնակցում էի, երգում էին այդ երգը՝ «Եթե ուրախություն ես ուզում, սկսի՛ր ցատկոտել»: Մի հիմար բռնեց ինձանից և ստիպեց ցատկոտել: Ես կենդանի վկայություն եմ, որ բացի ուրախությունից, ինչ ասես, որ դա չառաջացրեց:

Գիտե՞ք, թե ինչումն է այսօրվա եկեղեցու խնդիրը: Սովորական եկեղեցական մարդիկ, ովքեր երբեք չեն եղել մեր եկեղեցում, եթե հաճախեն այս ծառայությանը, իրենց հարմար չեն զգա, որովհետև նրանք լսել են «Կրակի մեծ գնդերը» և «Ձորջիան»: Սովորական մեղավորը, մտնելով սովորական եկեղեցի, իրեն անհարմար կզգա՝ լսելով «Պիզզահի փոթորկոտ տափաստաններից»-ը: Այո, երբ լսում ես այդ երգը, այն ինչ-որ ազդեցություն է թողնում քեզ վրա, այդպես չէ՞: «Պիզզահի փոթորկոտ տափաստաններից»:

Հիմա, Պողոսը Նոր կտակարանում խոսում էր լեզուների պարզևի մասին: Այդ կորնթացիներն ավելի շատ մտահոգված էին իրենց հոգևոր պարզևները ցույց տալով, քան մեծ պատվիրանը կատարելով: Նա ասում էր, որ եթե մի օտար գա, և դուք ամբողջ ժամանակ լեզուներով խոսեք, մա կմտածի, որ դուք ցնորված եք: Սա ենթադրում է այն, որ մենք չպետք է այնպես վարվենք, որ միայն այս փոքրիկ խումբը հասկանա սովյալ բանի հոգևոր իմաստը. մենք չպետք է ցնորված, տարօրինակ մարդկանց տեսք ունենանք:

Աստծո Խոսքը այս եկեղեցու առանցքն է, և Աստծո շնորհքով ես կշարունակեմ այն այնպես քարոզել, որ մարդիկ կարողանան հասկանալ: Սա ավելին է, քան կարելի է ասել մարդկանց մեծ մասի համար: Եկեղեցու հիմնական պնդումը սա է. Աստված Քրիստոսում հաշտեցրեց աշխարհը Իր հետ, և Աստծուն ոչ ոք չի տեսել: Եթե օգտագործենք Հովհաննեսի խոսքը, որն է «exegesis», ապա դա նշանակում է, որ «Նա դուրս եկավ վարագույրի ետևից և ի ցույց դրվեց»: Նա վրան խփեց մարդկային մարմնի մեջ և քայլեց սովորական փողոցներով: Կրոնական մարդիկ նույնիսկ չճանաչեցին նրան: Կրոնական մարդիկ ասում էին Նրան: Նրան անվանում էին «ուտող և գինի խմող»: Դա չէր հորինվել հոգևորականության դասի կողմից: Նա բավականություն էր ստանում Իր փոխհարաբերություններից: Իմ Աստվածաշունչն ասում է, որ Հիսուսը մեղավորների բարեկամն էր: Երկար ժամանակ է, ինչ ես նկատել եմ, որ այդ հատկությունը չկա եկեղեցում:

Եվ հասարակ ժողովուրդը նրան ուրախությամբ լսում էր: Նա պարզ էր խոսում... Ես կրկնում եմ, Հովհաննեսն ասաց. «Աստծուն ոչ ոք չի տեսել, բայց Քրիստոսը պատմեց»: Այստեղ օգտագործվում է

այն բառը, որից մենք ստանում ենք «exegesis» բառը, որը նշանակում է «դուրս հանել վարագույրի ետևից և ի ցույց դնել»: Նա Աստծուն ցուցադրեց մարդկանց փողոցներում և պարզ դարձրեց այն, ինչ դժվար էր հասկանալ: Եկեղեցին փորձել է այն կրկին հեռու նետել, և նրանց համար հոգևոր լինելու նշանը «ամեն մեկից վեր լինելն է»՝ արտահայտելով այնպիսի խորը հոգևոր ճշմարտություններ, որոնք միայն հիմարը կարող է հասկանալ, բայց եկեղեցին՝ ոչ: Քանի որ իրենք չեն հասկանում դա, մտածում են, որ եթե դա հասկանալի է, ուրեմն հոգևոր չէ: Ուստի թույլ տվեք կրկին ասել. «Մենք չենք փորձում պարզապես մեկ այլ եկեղեցի լինել»:

Ես լսում եմ այն մարդկանց, ովքեր լիցքաթափվում են ռոքնռոլի երաժշտությունից, որովհետև նրանք չունեն բավականաչափ ուսումնական կարողություններ Աստվածաշնչից ճշմարտության նոր աղբյուրներ գտնելու համար: Ես չեմ կարող բավականաչափ երկար ապրել այս Գրքի խորությունները փորելու համար: Եվ եթե սատանան պատրաստվում է քեզ հետ խոսել ռոքնռոլի ձայնագրությունը հակառակ ուղղությամբ պտտելու միջոցով, դա նրան չի հաջողվի: Ես ընդամենը մեկ անգամ եմ լսել այդ ձայնագրությունները հակառակ ուղղությամբ: Մի գիշեր այդպես արեց մեր տնօրենը նրանից հետո, երբ տղաները նվագեցին «Սրտաճմլիկ հյուրանոցը»: Եթե սատանան այնպես էր խոսում, որ ես նրան չէի կարողանում հասկանալ, որքան էլ փորձեի, ուրեմն նա այդքան էլ շատ բան չունեի ասելու: (Իրականում վախենալու բան կա, երբ սատանան խոսում է ռոքնռոլի երաժշտության ժապավենը հակառակ ուղղությամբ պտտելու ժամանակ): Ես դիտել եմ մարդկանց Աֆրիկայի ջունգլիներից մինչև Բրազիլիայի բարձրունքները, որոնք, օգտագործելով իրենց ազգային երաժշտությունը, սրտի խորքից իրենց ուրախությունն են արտահայտել Աստծուն, իսկ հետո տեսնում եմ ինչ-որ գավառական փոքրիկ թուլամորթի, որը, չկարողանալով որևէ ուղերձ գտնել, միանում է դատապարտության գործունեությամբ զբաղվողներին: Նման դեպքերում ես ասում եմ. «Աստված, օգնիր մեզ կառուցել ողջամիտ եկեղեցի այս բոլոր հիմարների մեջ»:

Այսպիսով միշտ հետաքրքիր է ամեն կիրակի դիտել մարդկանց, ովքեր գալիս են աշխարհից փախչելու ցանկությամբ և անցնում այդ հոգևոր «գինարբուքի» միջով, որտեղ լսում ես. «Ու~հ, ու~հ, ու~հ»: Հասկանում եք, ես դրա մեջ եմ մեծացել: Եթե ես լինեի Պողոսի նման և կամենայի պարծենալ, եթե դա անվանեիմք փարիսեցիների յուրահատուկ արթնության շարժ, ապա ես կլինեի փարիսեցիների փարիսեցին, որն ապրում է նրանց վերակացուի տանը և, լինելով նրա սանը, մտածում է արժանանալ այն մեծ ճակատագրին, երբ յուրաքանչյուր խոշոր համաժողովին չորս կամ հինգ մարդուց իրեն կընտրեն որպես խոսնակ: Ես դեռ հիշում եմ, երբ երրորդ անգամ Ավստրալիայում քարոզում էի իր

տեսակի մեջ ամենամեծ եկեղեցական հավաքույթին և հետևում նույն մարդկանց, ովքեր անցնում էին նույն պտույտներով և վերադառնում հոգևոր փորձառության այն նույն մակարդակին, որով անցել էին նախորդ տարի: Երրորդ ուղևորությունից արդեն սկսում ես ճանաչել նրանց: Նրանք հասնում էին այդ հոգևոր խրախճանքի փուլին, ապա սահելով իջնում մինչև հաջորդ տարի կրկին վերալցվելը:

Ես մեկնեցի Սիդնեյ մեկ շաբաթ հանգստի՝ պատրաստվելով վերադառնալ և լինել այն հարանվանության խոշոր տարեկան ժողովի հատուկ տնօրենը, որտեղ ես աշխատում էի: Ես տեղավորվեցի Սիդնեյի «Wentworth» հյուրանոցում: Մի ամերիկացի ճանաչեց իմ արտասանությունը, երբ ես պատվեր էի տալիս, և ծանոթացավ ինձ հետ: Նա Սթենֆորդից էր՝ մասնագիտությամբ բժիշկ, ուստի մեր միջև անմիջապես համալսարանական կապ ստեղծվեց: Նա Վիետնամում բժիշկ էր: Հետո ծանոթացրեց իր գործընկերոջը՝ Մոնտանայից մի կովբոյի, որը նրա ուղղաթիռի օդաչուն էր: Նրանք այնտեղ էին հանգստի և զվարճանքների համար: Նրանք խնդրեցին ինձ միանալ իրենց: Դա հանգստի և զվարճանքների թեժ ժամանակն էր, և նրանք իրենց ծառայողներից մեկի գրպանը դրել էին 166\$, որպեսզի կարողանային թռչել Հոնկոնգ կամ Սիդնեյ... կամ մեկ այլ զվարճանքի վայր: Նրանք բացակայելու էին ընդամենը երկու օրով և այդ ընթացքում պիտի փորձեին մինչև վերջ անել ամեն բան, ինչ հնարավոր է, և ապա կրկին թռչելով վերադառնալ մահով, սարսափով և վնասվածքներով լի այդ ջունգլիները: Մենք ուղևորվեցինք այդ քաղաքի յուրաքանչյուր պանդոկը: Վերջինը «Taxi Club»-ն էր, որ փակվում էր առավոտյան ժ. 5:30-ին, իսկ առաջին պանդոկը բացվում էր ժ.6:00-ին, այնպես որ «Taxi Club»-ից մինչև պանդոկ պահանջվեց անցնել 30 րոպե ոտքի ճանապարհ:

Ես նրանցից հեռացա ժ.6:30՝ շատ վրդովված մի պարզ բանից: Երբ ես այդ գիշեր վկայեցի, եկա մի անփոփոխ եզրակացության, որ եկեղեցին ներգրավված է սուրբերի փոխապատվաստման մեջ: Այն ոչ միայն չի հասնում աշխարհին, այլև նույնիսկ չգիտի, թե որտեղ է աշխարհը: Ես արագ հրաժարվեցի հարանվանության մեջ իմ զբաղեցրած պաշտոնից և որոշում կայացրեցի, որ կփորձեմ ամեն բան անել, որպեսզի տարածեմ հայտնության այն լույսը, որ Աստված տեղավորվեց սովորական կյանքի մեջ, որպեսզի Աստված ու Նրա խոսքը հասկանալի դառնան հասարակ մարդկանց:

Ահա թե ինչը ստիպեց ինձ սկսել այս ճանապարհորդությունը, որի նպատակն է հաստատել և քարոզել Աստծո Խոսքը, որից գալիս է հավատքը և տարածել Ավետարանի հիանալի բարի լույրը, որով Պողոսը ցնցեց մի ամբողջ կայսրություն. մարդիկ պետք է իմանան, որ Աստված փնտրում է այնպիսի մարդկանց, ովքեր վստահում են Իրեն: Ինչպիսիսի էլ լինի քո իրավիճակը, Նա վերցնում է քեզ այնտեղից,

որտեղ դու գտնվում ես, և այնպես, ինչպես դու կաս: Եվ եթե դու վստահես Նրան, Նա կսկսի փոխել քեզ: Քեզ հարկավոր չէ անգիր անել այս ողջ աստվածաբանական ժարգոնը, ոչ էլ անցնել այս բոլոր աստվածաբանական պտույտների միջով: Պարզապես սովորիր վստահել Աստծուն, որովհետև Նա ունի Իր ուրույն գործելակերպը: Նա հոգ կտանի քեզ փոխելու համար:

Հիմա, ձեզանից քանիսը շուրջ տասը տարի չեն եղել որևէ եկեղեցում, մինչ սկսեցիք գալ այն եկեղեցին, որտեղ ես քարոզում եմ: Կարո՞ղ եք ոտքի կանգնել: Լավ, դա արդեն մի բան է, այնպես չէ՞: Կարող եք նստել: Ուրեմն արժեին այն տասը տարիները, որ մենք այստեղ ենք: Շատ մարդիկ հեռացել են եկեղեցուց «դատարկաբանության» պատճառով: Գու երբեք չես հեռացել Աստծուց, և Նա երբեք չի հեռացել քեզանից: Քաղաքի մնացած եկեղեցիները կարող են մրցել սրբերի համար, և եկեղեցական քափառաշրջիկները կարող են ետ ու առաջ տեղափոխվել: Ես ասել եմ այս տասը տարիներին. «Ուղարկեք ինձ մոտ քաղաքի յուրաքանչյուր մեղավորին, ով գիտի, որ Աստծո կարիքն ունի: Բարի գալուստ այստեղ այնքան ժամանակ, քանի դեռ Աստծո խոսքի նկատմամբ կա հարգանք»: Եվ Աստծո Խոսքի ուսուցման համար օգտագործվող այս համալսարանական բեմը կպահպանի այդ ուղղվածությունը: Մենք գիտենք ինչպես հիմներ երգել, բայց մենք չենք պատրաստվում տարվել «Կրակի մեծ գնդերով»:

Լավ, սա մեկ այլ կիրակի է, երբ ես այդքան էլ համոզված չեմ, որ Աստված գիտի, թե ինչ է անում: Ես լավ ուղերձ էի ծրագրել քարոզել, իսկ Նա դրդում է ինձ մեկ այլ բան անել, այնպես որ եթե ձեր դուրը չի գալիս, Նրան մեղադրեք: Եվ ասեք Նրան, որ այսօրվանից Սքոտին թողնի քարոզել այն, ինչ նա ցանկանում է: Ես կարծում եմ, որ պարզապես տասը տարվա մեջ միայն մեկ անգամ է Աստված թույլ տվել ինձ քարոզել այն, ինչ ես եմ ցանկացել: Մնացած ժամանակ Նա ինձ մահու չափ վախեցնում է՝ ստիպելով խոսել այնպիսի բաներից, որոնք, ես գիտեմ, որ նույնիսկ Նրա համար է դժվար հասկացնել:

Ձեզանից քանիսը գիտեն, որ ես տարին յոթ ուղերձ եմ քարոզում անկախ նրանից, ձեր դուրը գալիս է, թե ոչ: Ես ասացի Աստծուն. «Հիմա, քանի որ մենք գտնվում ենք այդ արտասովոր նոր վայրում, մի արա այդպես»: Իսկ Նա ոչ մի բան չասաց: Նա պարզապես որոշել է, որ ես պետք է դա անեմ: Գու կասես. «Ինչպե՞ս է Աստված ներգործում քեզ վրա»: Գե, ցանկացած բան, որ ես ծրագրել եմ, իմ մտքից դուրս է գալիս և ես մտածում եմ միայն այդ բանի մասին: Ես կարիք չունեմ, որ ինչ-որ թռչուն գա ու անգլերեն խոսի:

Այսօր ես քարոզում եմ իմ ուղերձներից մեկը. 2-րդ Օրինաց 33: Դա այնպիսի քարոզ է, որ դու կարող ես լսել հազար անգամ: Դա նման է Աստծո գրքից մի խոստումի: Դու կարող ես այն հազար անգամ լսել, բայց հետո, ինչպես Կարլ Բարտոն է մեկ անգամ ասել, «գազանի նման խոսքը կցատկի և կբռնի քեզ», և դու կհիմնաս, որ այդ պահին Աստծո Հոգին այն կիրառելի դարձրեց քո կյանքում: Աստվածաշնչի ամենահարուստ խոսքերից մի քանիսը սպառվել են իրենց նշանակության մեջ՝ քարոզվելով տասը հազար անգամ, բայց գալիս է ժամանակ, երբ Սաղմոս 23-ը ինչ-որ բան է նշանակում անձամբ քեզ համար. «Տերն է իմ հովիվը, և կարոտությունն չեմ ունենա»: Եվ այս յոթ ուղերձները կառուցված են այդպիսի խոսքերի շուրջ: Կապ չունի, թե քանի անգամ ես նայում նրանց, գալիս է ժամանակ, երբ դու այդ հատուկ խոսքի կարիքն ունես, և դա արդեն բոլորովին այլ բան է:

Կան ուղերձներ, որոնք ես քարոզում եմ և ակնկալում, որ եկեղեցու ամեն անձնավարություն դրանից ինչ-որ բան սովորի, ինչ-որ ոգեշնչում, հավատքի համար ինչ-որ հիմք ստանա: Սա այնպիսի ուղերձ է, որը ես քարոզում եմ շուրջ տասը տարի և տարբեր անհատներ դրա կարիքն ունեցել են տարբեր տարիներ: Ես դրա կարիքն ունեմ այսօր: Ինչպես հասկանում եք, ես ուղղակի կատակում էի Աստծո մասին: Ես այսօր այս ուղերձի կարիքն ունեմ: Եթե դու դրա կարիքը չունես, գնա քնելու, բայց այնպես մի նայիր, կարծես ամեն ինչ ակնհայտ է:

Եվ մենք շարունակում ենք մարդկանց սովորեցնել: Միակ բանը, որ ես այլ կերպ կանեի, եթե կառուցեի այս եկեղեցին, զուգարանները այնտեղ՝ ետևի կողմում, տեղադրելն է: Հիմա, եթե քեզ հարկավոր է զուգարան գնալ, մի՛ իջիր այս միջանցքով, հետո անցիր բեմի մոտով, ապա բարձրացիր այնտեղ և իջիր աստիճաններով: Այն կողմով գնա՛: Մի՛ սպասիր, մինչև վտանգավոր վիճակում հայտնվես: Այն ճանապարհով գնա, և թող կարգուկանոնի ծառայողները ուղեկցեն քեզ մինչև վերջ: Քեզ համար լրացուցիչ երկու բույե տրամադրիր: Պա՞րզ է:

Հիմա, ուղերձը 2-րդ Օրինաց 33-րդ գլխից է. «Ասերի երգը»: Դուք արդեն գիտեք, թե դա ինչի մասին է: 2-րդ Կորնթացիների 1.20-ը մեզանից յուրաքանչյուրին ձկնորսական իրավունք է տալիս անցնել Հին և Նոր կտակարանների միջով և գտնել համապատասխան խոստումներ: Հիշո՞ւմ եք, անցյալ կիրակի ես ձեզ ասացի, որ կա մեծ տարբերություն «օրենքի քարոզի» և «խոստմունքի քարոզի» միջև: Առաջինը քեզ տալիս է օրենքների մի ամբողջ խումբ, որոնց պետք է ենթարկվել, երկրորդը՝ հավատքից բռնվելու լծակ, որը հաստատում է քո կապը Աստծո հետ՝ հնարավորություն տալով Նրան Իր կյանքը դնել քեզանում և այդ կապի պատճառով կատարել քեզ փոխելու և Իր պատկերին նմանեցնելու

աշխատանքը: 2-րդ Կորնթացիների 1.20-ը քեզ իրավունք է տալիս ձկնորսություն կատարել Աստծո Գրքի միջով և գտնել յուրաքանչյուր խոստում, և երբ հասնես դրանցից մեկին, որը համապատասխանում է քո իրավիճակին, բռնվիր նրանից, որովհետև 2-րդ Կորնթացիների 1.20-ն ասում է. «Որքան Աստծո խոստումներ որ կան (առանց բացառության) նրանում (Քրիստոսում) է այոն (կամ այո քեզ համար) և Նրանում է ամենը» (կամ թող քեզ լինի այդպես): Սա է միակ դրդապատճառը, որ ինձ հարկավոր է, այս խոստումը պահանջելու համար:

«Դա ուղղված էր Ասերին», - միգուցե դու ասես: Այս խոստումն էլ ուղղված էր Իսրայելին, երբ Եհովան ասաց. «Ես եմ Տերը՝ քո բժիշկը»: Գիտես, դա իմն է, որպեսզի պահանջեմ, երբ դրա կարիքն ունենամ: Ասերի այս երզը խոստում է, և Նոր կտակարանն ասում է. «Բոլոր խոստումները Նրանում», իսկ ես «Նրանում եմ», երբ գործում եմ հավատքով: Իսկ Հռոմեացիների 8-րդ գլուխն ասում է, որ դու Նրա մեջ ես հայտնվում, երբ Նա գալիս է քո մեջ: Դու գործում ես հավատքով. Նա մտնում է քո մեջ: *Ipsa facto* (լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ փաստորեն) դու «Նրանում ես»: Այդ պատճառով Նրանում՝ որպես *հավատա-ցող*, ես կարող եմ պահանջել ցանկացած խոստում: Վերջ նույնաբանությանը: Հիմա եկեք օգտվենք այս հնարավորությունից:

Ո՞րն է խոստումը: «Քո կոշիկները...» (25-րդ խոսք): Ենթադրում եմ, որ արդեն ձանձրացնում եմ ձեզ, որովհետև դուք գիտեք այս մասին: «Քո կոշիկները երկաթ և պղինձ լինեն»: Չգիտե՞ք, թե ինչ եմ պատրաստվում ասել: «Ամուր կոշիկներ դժվար ճանապարհորդության համար»:

Քեզ հարկավոր չեն երկաթե և պղնձե կոշիկներ ցանցաճոճին պառկելու համար... Հը՞: Քեզ հարկավոր չեն երկաթե և պղնձե կոշիկներ փետուրներից անկողնու համար... Քեզ հարկավոր չեն երկաթե և պղնձե կոշիկներ այդ գերհոգևոր կախարդական գորգերի համար, որոնք քեզ ամեն օր քշում-տանում են դեպի փառք (ճոխություն): Քեզ հարկավոր են երկաթե և պղնձե կոշիկներ, եթե ճանապարհորդությունը դժվար է: Որտեղի՞ց է եկել այս գաղափարը, որ շարքերի միջով դեպի զոհասեղան (եկեղեցու առջևի մաս) 50 յարդ կամ 50 ոտնաչափ կամ 5 ոտնաչափ քայլը քեզ կդնի հեշտ ճանապարհի վրա: Հիշեք, թե ինչ ասացի ձեզ: Դարձիր քրիստոնյա, և ամբողջ դժոխքը կարձակվի քեզ վրա: Եթե ուզում ես, որ ամեն բան դժվարանա, արի Հիսուսի մոտ:

Գիտե՞ք, թե ինչն եմ ես ասում ձեզանից շատերի մեջ: Դուք գլխով եք անում գիտունների նման, բայց ձեր ճանապարհին առաջին փոքրիկ քարին հանդիպելիս բղավում եք. «Օ~, այո, դա ճիշտ է,

հովի՛վ): Այսպիսով Աստված փշրում է այդ քարի բեկորը, և դուք կրկին սայթաքում եք ինչ-որ բանից հաջորդ երեքշաբթի ու բարկանում Աստծո վրա: Ես ուղղակի կարող եմ դա ասել ձեր դեմքի արտահայտությունից: Եթե մի փոքր ավելի ցնցված տեսք ունենայիք այս ուղերձից, ես առաջ կշարժվեի: Ի՞նչ եմ ուզում ասել ձեզ. «Պի՛նդ կաց, քրիստոնյա՛. ավելի վատ է լինելու»: «Օ~, Աստվա՛ծ, ինչու՞ է սա պատահում ինձ հետ»: Որովհետև դու գնում ես Աստծո ետևից, հիմա՛ր: Եթե դու հոսանքն ի վեր ես լողում, մկաններդ պետք է լարես:

«Եթե այս աշխարհից լինեիք, աշխարհը կսիրեր իրեններին»: Հավատքի ճանապարհը քեզ այն կողմ է շրջել: Սատանան խելագար չէ: Դու դուրս չես գալիս և ամբողջ ժամանակ կրակում բանտարկյալներին. նրանք քեզ չեն անհանգստացնում: Թույլ տուր ինչ-որ մեկին բարձրանալ հավատքի մակարդակի մեջ և սկսել քայլել, ինչպես Աստծի որդիները քայլեցին դեպի այն երկիրը, որ Աստծո Խոսքը խոստացավ նրանց, այդպիսիները կհանդիպեն որոշ խնդիրների: Ես անհոգ եմ եղել այս եկեղեցու համար վերջին շաբաթների ընթացքում: Ձեզանից ոմանք կրկին վերադարձել են իրենց փոքրիկ 10-տոկոսանոց հոգևոր ալիքին. ամիսը մեկ անգամ երևում եք Հույսի փողոցում, շաբաթը մեկ անգամ լսում եք ծեր Սքոտին. «Օ, նա այնտեղ կլինի», ծրագրավորում եք մասնակցել «Հավատքի ձայնին», բայց այդքան էլ չեք զգում, որ այդ երեկո պետք է այնտեղ լինեք»:

Բարեկամնե՛ր, սա դժվար ճանապարհորդություն է: Դժվար ճանապարհորդություն դիմացկուն մարդկանց համար: Ես չեմ կարծում, որ մեր եկեղեցում շատ մարդկանց մոտ դա կստացվի: Քրիստոնեությունը երբեք չի եղել թուլամորթների ընկերություն. երբեք էլ նախատեսված չի եղել: Սա դժվար ճանապարհորդություն է, և եթե դու պատրաստվում ես ծառայել Աստծուն, սպասի՛ր, որ այն դժվար ճանապարհորդություն է լինելու:

Հիմա, դուք ցանկանում եք, որ ես մանրամասն խոսեմ: Ես դա չեմ անի: Ձեզանից քանի՞սը կարող են վկայել, որ երբ դուք սկսել եք գործել հավատքով, հանկարծակի ձեզ վրա սկսել են բաներ տեղալ: Դուք մտածել եք, որ կմեռնեք: Գիտե՞ք, թե ես ինչու եմ դեմ շատ քարոզներին և շատ քրիստոնյա գիտությունների բակալավրներին: Նրանք ձեզ այնպիսին են դարձնում, որ սատանան կարողանա կործանել ձեր հավատքը: Գալիս ես Աստծո մոտ, և ամեն բան հեշտանում է. սա կատարյալ անհեթեթություն է: Ե՛կ Աստծո մոտ, տու՛ր Աստծուն, հարստացի՛ր, առողջ եղի՛ր և ապրի՛ր մինչև խորը ծերություն, և բոլոր կանայք կհետապնդեն քեզ կամ հակառակը. հիմարություն~ն: Երբ դու գալիս ես Աստծո մոտ, ամբողջ դժոխքը արձակվում է քեզ վրա:

Պողոսն ասում է. «Մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ իշխանությունների և պետությունների»: Այս աշխարհում կան ուժեր. «օղի իշխանը»: Նա չի ցանկանում, որ դու հավատք ունենաս, և քանի դեռ չունես հավատք, նա պարզապես կթփթփացնի ուսիդ և կասի. «Հասի՛ր դրան»: Դուք լսում եք այդ մտավոր թզուկներից մեկին, որը քարոզում է քրիստոնեության մասին՝ որպես կանոնների նոր համակարգ, որոնց պետք է հետևել... Այն աշխարհը, ուր Հիսուսը եկավ, լի էր ծեսերով, կանոններով, ուսմունքներով... և մարդիկ ուշադրություն չդարձրեցին Նրան: Եթե դու սկսես կիրառել քո հավատքը, որը նշանակում է Աստծուն վստահել, դու կունենաս թշնամի, որովհետև նա ունի ընդամենը մեկ նպատակ այն օրվանից, երբ եկավ Ադամի և Եվայի մոտ և ասաց, որ այն, ինչ Աստված ասաց, չի կատարվի: Աստծո խոսքին այդ առաջին մարտահրավերը նետելուց հետո մինչև հիմա նա այդ գործով է զբաղված: Երբ սկսում ես գործել Աստծո Խոսքի համաձայն, ամբողջ դժոխքը բարձրանում է քո դեմ: Տարին մեկ անգամ ես ցանկանում եմ քեզ հիշեցնել այդ մասին: «Ես համոզված չեմ, որ ուզում եմ կատարել այս ճանապարհորդությունը»: Դե, ուրեմն գնա՛ դժոխք: Հավիտյան: Դա է ընտրությունը. դժոխք, որը դուրս է եկել քո դեմ, կամ դժոխք, որը շրջապատում է քեզ այնտեղ: Հավիտյան: Մենք կարիք ունենք այս քրիստոնեությունը հասցնել նրան, որտեղից այն սկիզբ է առել: Սատանայի համար կա մեկ թիրախ. դա ցանկացած մեկն է, ով կգործի հավատքով՝ այս Խոսքի հիման վրա: Այդ պատճառով ճանապարհորդությունը դեպի խոստմունքի երկիր անցնում է դժվար ճանապարհով: Դու չես կարող այն անցնել տնային կոշիկներով, ոչ էլ տոտիկ-տոտիկ անել բալետի մաշիկներով:

Դժվար ճանապարհորդություն:

Բայց, ո՞րն է խոստումը: «Ճանապարհն անցնելու համար բավականին ամուր կոշիկներ»: «Ի՞նչ»:
«Այո»: Ձեզանից քանի՞սը գիտեն... Դե, երբ դուք սկսեցիք այս ճանապարհորդությունը, տասը տարի առաջ ձեզանից քանի՞սն էին մտածել, որ այդ ճանապարհին ձեզ կսպանեն որոշ բաներ, որոնք հիմա նույնիսկ չեն էլ անհանգստացնում ձեզ: Թույլ տվեք տեսնել ձեր ձեռքերը: Ես նկատի ունեմ, որ հիմա դուք կարող եք մագլցել այն բարձունքները, որոնք տասը տարի առաջ թվում էին, թե փուլ կգան ձեզ վրա: Եթե որևէ մեկը տասը տարի առաջ ձեզ ասած լիներ, որ դուք կարող եք անել հավատքով այն, ինչ արել եք վերջին վեց ամիսներին, ձեզանից քանի՞սը չէին մտածի, որ այդ մարդիկ խելագար են: Ձեզանից քանի՞սը տասը տարի առաջ երբևէ կհամարձակվեին փորձել այն, ինչին դուք բախվում եք ամեն օր և դուրս գալիս դրա միջից: (Ես չեմ խոսում նրանց մասին, ովքեր ամուսնացել են վերջին տասը տարիներին): Ես խոսում եմ... Ո՞րն է ուղերձը: «Քաջացե՛ք, սուրբե՛ր: Ավելի վատ է լինելու»: Բայց մենք

ավելի դիմացկուն ենք: «Այսօր ինձ դժավարություններ են սպասվում»: «Ես պատրաստվում եմ լուծել դրանց հարցերը»: Դժվար ճանապարհ, ամուր կոշիկներ: Քրիստոնյաներն անցնում են նրանով: Հավատա-ցողները ողջ են մնում:

Սեպտեմբերի 21, 1986 թ.: Կարծում եք, որ այս վերջին տարին վատ տարի^օ էր, սուրբե՛ր: Դուք դեռ ոչինչ չեք տեսել: Ավելի վատ է լինելու, բայց մենք ավելի լավ ենք լինելու: Սա է ուղերձը: Երբեք մի՛ ասա՝ մեռնեմ: Երբեք մի ասա՝ մեռնեմ: Դե լավ, ինձ դա դուր չի գալիս, բայց թող լինի այդպես:

Ո՞րն է հաջորդը. «Եվ քո ուժը քո օրերի չափ լինի» (անգլերենում՝ «Ինչպես քո օրն է, այնպես էլ քո ուժը կլինի»): Ես այսօր իսկապես հեշտ օր եմ ունենալու: Ես այսօր արթնացել եմ՝ ինձ շատ թշվառ զգալով: Երբևէ ունեցե՞լ եք այնպիսի գիշերներ, երբ կարող եք կանգնել գլխի վրա, ոտքերի վրա կամ ցանկացած այլ բան անել ու չկարողանալ քնել: Հը՞: Երբ ներքնակը կարծես խոզուկի նման ծակում է: Եվ ապա Իր բարությանը Տերը քեզ վրա խորը քուն է բերում զարթուցիչի զանգելուց հինգ րոպե առաջ: Եվ դու այնպես հոգնած ես արթնանում, որ նույնիսկ համոզված չես, որ ոտքեր ունես: Այս խոստումն ասում է. «քո օրերի չափ կամ ինչպես քո օրերն են»: Այն շատ անհատական է: Սա ուղերձ չէ բոլորիդ համար, այլ ուղերձ է ամեն մեկիդ համար: «Եվ քո ուժը քո օրերի չափ լինի»: Ուժ տվողը այսօր քեզ համար ուժ է ծրագրում:

Հիմա, այդ ուղերձի հիասքանչ բարի լուրն այն է, որ այն հատուցում է վատ զգացողությամբ արթնանալու համար: Եթե դու արթնանում ես և թույլ ես զգում, ուժի չափը չնչին է: «Եվ քո ուժը քո օրերի չափ լինի»: Ես այնպիսի օր եմ ունենալու, որը շատ ուժի կարիք չի ունենա. լավագույն բանը դրա համար այն է, որ սատանան այսօր գալու է թզուկի տեսքով:

Իմ հայրիկն ուներ արտրիտի ցավեր, և 80 տարեկանում նա բավականին լավ տեսք ուներ, բայց մեծ մասամբ առավոտները արթնանում էր ցավի զգացողությամբ: Մայրիկս էլ էր առավոտները մեծ մասամբ ցավի զգացողությամբ արթնանում, և ես նրանցից ժառանգել եմ դա: Երբ հայրիկը մի հազվադեպ օր առավոտյան արթնանում է և իրեն լավ զգում, նա անհանգստանում է: Նա արթնանում է և անհանգստանում գլուխը կորցնելու աստիճան: Առաջին մեկ ժամը նա համոզված չէր, թե ինչ է կատարվում. միգուցե մահացել է և հայտնվել երկնքում: Դի՞շտ է, մայրիկ: Հայրիկը արթնանում է և այնքան լավ զգում, որ սկսում է հառաչել: Նա գիտեր, որ ինչ-որ բան այն չէ, որովհետև չէր կարող այդքան լավ զգալ: Դա չափից դուրս աննորմալ էր:

Երբևէ լինու՞մ է, որ արթնանում ես և քեզ այսպես զգում. « Եթե առյուծ քայլեր այստեղով, ես կջարդեի նրա ծնոտը»: Ջգույշ եղի՛ր, ո՛վ մարդ: «Ինչպիսին քո օրն է», - դա վատ լուրն է, - «Ինչպիսին քո օրն է, այդպիսին կլինի քո ուժը»: Գիտե՞ք, դուք չեք կարող հաղթել: Դուք չեք կարող հաղթել: Կամ պետք է վատ զգաք՝ իմանալով այն բարի լուրը, որ այսօր շատ անախորժություններ չեն լինի, կամ պետք է լավ զգացողություն ունենաք՝ իմանալով, որ դուք այնքան շատ ուժ ունեք, որ սարսափելի օր է ձեզ սպասվում: Ինչպես այն բժիշկը, որը գնում է այն տղայի մոտ, ում ոտքը նոր էր կտրել և ասում, «Ես քեզ համար լավ և վատ լուր ունեմ: Վատ լուրն այն է, որ մենք կտրել ենք սխալ ոտքը: Լավ լուրն այն է, որ այն ոտքը, որը կարծում էինք, որ պետք է կտրենք, հայտնաբերեցինք, որ կտրելու կարիք չունի»: Դու չես կարող շահել կորցնելու համար: Եթե արթնանում ես ու լավ զգում, նշանակում է, որ դեերը պատրաստվում են վայրէջք կատարել: Եթե արթնանում ես և վատ զգում, ուրեմն բավականություն ստացիր այն փաստից, որ դեերն այդ օրն այդքան շատ չեն լինի: Բարի լուրն այն է, որ եթե վատ ես զգում, այդքան շատ խնդիրներ չեն լինի այսօր: Վատ լուրն այն է, որ եթե լավ ես զգում, ամբողջ դժոխքն է դուրս գալու քո դեմ: «Եվ քո ուժը քո օրերի չափ լինի»:

Բայց ո՞րն է այստեղ գլխավորը: Անկախ նրանից, թե ինչ օր է, ուժ Տվողը մեզ կտա բավականաչափ ուժ այն անցկացնելու համար:

Սա հավանաբար ամենածանր դասն է, որ ես ստիպված եմ եղել սովորել իմ ողջ քրիստոնեական կյանքի ընթացքում. երբևէ մի՛ հանձնվիր օրվա վերջում: Երբևէ մի՛ հանձնվիր օրվա վերջում: Արդյո՞ք մենք չունենք այս համաձայնությունը: Եթե քո հովիվը հրաժարական է տալիս գիշերը, դա հաշվի չի առնվում: Աստծո խոստումն է. «Եվ քո ուժը քո օրերի չափ լինի»: Դա նշանակում է, որ զորաց Տերը և ամեն փառքի Աստվածը պատրաստվում է մեզանից յուրաքանչյուրին համապատասխան ուժ բաժանել, որով մենք կանցնենք այս օրվա միջով:

Հավատքը սկսում է գործել, երբ դու բռնվում ես այս խոստումից և հակառակ կանգնում այդ մշտապես ներկա փորձությանը և... Ձեզանից քանի՞սն են կյանքում ինչ-որ օր համոզված եղել, որ իրենց չի հաջողվի դա անել: Քանի՞սը: Որոշ մարդիկ այնպիսի քրիստոնեություն են քարոզում, որտեղ ամեն ինչ ծրագրավորված է: Քսան տարեկանում գալիս ես Աստծուն և արդեն ճշգրիտ գիտես, թե ինչ ես անելու, երբ լինես 83 տարեկան:

Աստված այդպես չի գործում, և ես ասացի ձեզ, որ ես ինքս այս ուղերձի կարիքն ունեմ: Ես չգիտեմ, թե ինչի առջև ես դու այսօր կանգնած, իսկ ես այստեղ քեզ զվարճացնելու համար չեմ: Սա մի ուղերձ է, որը ես ցանկանում եմ, որ իրականություն դառնա: Ինչի առջև էլ այսօր կանգնած լինես և ինչի առջև վաղը և մյուս օրը կանգնած լինես, ոչ մեկը երբևէ նյարդային ուժեղ ցնցում չի ստացել այսօրվա խնդիրների պատճառով: Իմ տեսածից կամ լսածից դատելով՝ չկա ձեզանից որևէ մեկը, ով իր հոգու խորքում չգիտի, որ այսօր դա իր մոտ կստացվի: Նյարդային ցնցումներն այն պատճառով են լինում, որ այն, ինչը մեզ անհանգստացնում է, վախենում ենք, որ կարող է տեղի ունենալ վաղը կամ մյուս օրը:

Աստծո խոստումն այն է, երբ վաղը դառնում է այսօր անձամբ քեզ համար: «Լավ, բայց դու չգիտես, թե ինչի առջև եմ ես կանգնած. չորեքշաբթի օրը ես պետք է հանդիպեմ Հարկային տեսչության հետ»: «Դու չգիտես, թե ինչի առջև եմ ես կանգնած. երեքշաբթի օրը ես սնանկանալու եմ, և նույն օրը կինս բաժանվելու է ինձանից»: Հիշո՞ւմ եք, որ մի գիշեր հեռուստատեսային եթերի ժամանակ մի մարդ ինձ զանգահարեց և ասաց. «Ես չգիտեմ, թե ինչ անեմ: Ես հենց նոր սնանկացա, իսկ կինս էլ բաժանվեց ինձանից»: Գիտե՞ք, թե ես ինչ ասացի նրան. «Ո՛վ մարդ, ուրախությունից թռչկոտի՛ր: Շատ քիչ մարդկանց է հնարավորություն տրվում այս աշխարհում կրկին սկսել այդքան մաքուր էջից»:

Դադարիր թույլ տալ, որ վաղվա օրը սպանի քեզ: «Եվ քո ուժը քո օրերի չափ լինի»: Մտածե՛ք այդ մասին. Աստված հոգևոր ալքիմիկոսի նման յուրաքանչյուր օրվա համար համապատասխան ուժ է բաժանում: Նա, ով գիտի, թե ինչ է սպասվում, հաշվարկում է. «Ես այսօր Սքոտի վրա իմ ուժերից չեմ վատնի, որովհետև նա շատ մեծ խնդրի առջև չի կանգնելու: Ուստի թող նա արթնանա մի քիչ թշվառ վիճակում: Նրան չտաք գիշերվա քուն: Եթե թողնեք, որ նա այս գիշեր լավ քնի և վաղը արթնանա առույգ վիճակում, նա միջուկային ռումբ կօգտագործի մի ճանճ սպանելու համար»:

Ծիշտ ձևով սա ծրագրավորեք: Ձեզանից քանի՞սն են այսօր իրենց թշվառ զգում: Դե՛, ազնիվ եղե՛ք: Դուք երջանիկներից եք: Դուք ինձ նման եք. սատանան ձեզ շատ չի անհանգստացնի: Հիմա ու՞ր են մնացածը, ովքեր լինելու են հարձակման տակ: Դուք արթնացել եք՝ զգալով ձեզ ինչպես հսկա: Եկեք աղոթենք նրանց համար: Ես փորձում եմ ողջամիտ քրիստոնեություն քարոզել, որպեսզի անակնկալի չգաք: «Ամուր կոշիկներ դժվար ճանապարհորդության համար»: Պարզ ասած, մեզ մոտ դա կստացվի: Ստեղծեք դժվար ճանապարհ: Իմ կոշիկները կարող են դիմանալ դրան: «Էզուցվա համար հոգս մի արեք... օրվա համար բավական է իր նեղությունը», -ասաց Հիսուսը: Եկեք վերցնենք այն և տեղավորենք

մեր մտքում. Աստված մեր հավատքին արձագանքում է՝ Իր կյանքը մեր մեջ դնելով. «Եվ քո ուժը քո օրերի չափ լինի»:

Ո՞րն է հաջորդը. «Հավիտենական Աստվածը ապավեն է»: Օ~, կրկին մենք հանդիպում ենք գրեթե շփոթեցնող բառի: Երբայերեն տառերը կազմում են պատկերավոր բառեր: Նրանք այնպիսի իմաստ են պարունակում, որը պետք է պատկերացնել, գրեթե զգալ: Ի՞նչ է իրականում այստեղ ասվում. «Առջևից գնացող Աստվածը կլինի քո ապավենը»: Շատ լավ, ես ընդունում եմ այն փաստը, որ սա դժվար ճանապարհորդություն է: Ես ընդունում եմ այն փաստը, որ ես չեմ կարող յուրի տակառ ձեռք բերել հետագա օրերի համար: Աստված ուժ է տալիս օրվա համար, և Նա այնքան ուժ է թափում, որքան բավական է այդ օրը անցնելու համար, բայց ես կրկին մտահոգված եմ վաղվա համար: Աստված, իմանալով դա, ավելացնում է այս խոստումը: Հենց այդպես:

Տասը տարվա մեջ ամեն տարի մենք սա արել ենք, բայց սովորաբար հաջողություն չենք ունեցել: Մի՞թե վաղվա համար չենք նյարդայնանում: Պատմությունն առաջ է ընթանում, իսկ ես չգիտեմ, թե ինչ է ինձ սպասվում: Իսկ ի՞նչ է ասում այս խոսքը. «Առջևից գնացող Աստվածը մեր ապավենն է»: Երբ հասնում ես այնտեղ, արդեն ծածկոցի տակ ես: Եթե դու գնացել ես դպրոց, ապա գիտես, որ իրականության մասին կան որոշ բաներ, որոնք լայնորեն տարբերվում են նրանից, թե ինչպես ենք մենք ընկալում դրանք: Նայելով ինձ՝ քեզ համար միգուցե դժվար լինի ըմբռնել, որ ես տարածական առարկա եմ և կազմված եմ պտտվող փոքրագույն մասնիկներից: Բայց ձեզանից քանի՞սը ֆիզիկայի և բնական գիտությունների միջոցով վերջապես իմացան, որ դա ճշմարտություն է: Դե՛, ժամանակը հարաբերական է: Ժամանակը հարաբերական է: Աստված ասում է. «Ես եմ Ալֆան՝ սկիզբը, և Օմեգան՝ վերջը»: Ժամանակը հարաբերական է մեզ համար:

Հիմա, մենք ժամանակին նայում ենք այնպես, որ պատմությունը այն է, ինչը անցյալում է, ճի՞շտ է: Իսկ ապագան առջևում է: Դե: Ապագան դեռ պետք է գա, այնպես չէ՞: Այն առջևում է: Ես քայլում եմ դեպի ապագա, ճի՞շտ է: Պատմությունն այն ամենն է, ինչ իմ ետևում է: Այն, ինչը դեռ պետք է գա, առջևում է, ճի՞շտ է: Դե՛, մտածեք ինձ հետ:

Ինձ դուր չեն գալիս այն եկեղեցիները, որտեղ մարդիկ գալիս են և այսպես ուշադիր քարոզչին նայում, բայց իրենց մտքով մեկ այլ տեղում են գտնվում: Պատմությունն անցել է ինձանից, իսկ ապագան

դեռ պետք է գա: Այն իմ ետևում է, ոչ, այն այստեղ է: Պատմությունն է իմ ետևում, ճիշտ է: Արդյո՞ք մենք այդպես չենք նայում ժամանակին:

Եկե՛ք կրկնենք: Որտե՞ղ է պատմությունը: Իմ ետևում: Որտե՞ղ է ապագան: Իմ առջևում:

Հիմա, Աստված այնպես չի նայում, ինչպես մենք: Նա պատմությանը նայում է այնպես, ինչպես մենք՝ շքերթին: Նա գիտի սկիզբը: Նա գիտի վերջը: Եվ երբ դու նայում ես շքերթին, այն, ինչը առջևում է, արդեն անցել է, իսկ ինչը ետևում է, դեռ պետք է գա: Փաստորեն, այդ փոքրիկ ծաղրածուներն արդեն մաքրել են առջևի խառնաշփոթը: Հասկացա՞ք: Ես այդքան էլ համոզված չեմ:

Մենք նայում ենք ժամանակին, որտեղ պատմությունը ետևում է, իսկ ապագան՝ առջևում: Գու նայում ես շքերթին, որտեղ ապագան ետևում է, իսկ անցյալը՝ առջևում: Հը՞: Գե լավ, սպասեք: Ապագան իմ առջևում է, իսկ պատմությունը՝ իմ ետևում, բայց եթե ես իմ ուղեղը պտտեմ դեպի Աստծո տեսանկյունը, ապա այն, ինչը առջևում է, արդեն անցել է, իսկ ինչը ետևում է, դեռ նոր պետք է գա: Հը~:

Ահա թե ինչ է ասում այս պատկերավոր բառը... որ այն, ինչը մեզ վախեցնում է առջևում, «առջևից գնացող Աստվածը» արդեն այդ անկյունում է. Նա մաքրել է խառնաշփոթը, և մեզ համար ապաստան պատրաստել, երբ հասնենք այնտեղ: «Հե~յ, դա վատ չէ: Գժվար է հավատալ, բայց վատ չէ»: Չեզանից քանի՞սը հասկացան: Լավ, դուք խելացի եք:

Մտածե՛ք այս մասին: «Ամուր կոշիկներ»... «երկաթե և պղնձե»... «դժվար ճանապարհորդության համար»: «Եվ քո ուժը քո օրերի չափ լինի»: «Առջևից գնացող Աստվածը», որն արդեն պտույտ է կատարել և հարթել ամեն մի խառնաշփոթը, այնտեղ է, որպեսզի լինի իմ ապավենը, երբ ես հասնեմ այնտեղ: Եվ այն, ինչ ես մտածում էի, որ ապագան է, Նա արդեն անցել է այդ ճանապարհը: Այն, ինչ ես մտածում էի, որ դեռ պետք է գա, Նրա ետևում է, քանի որ Նա է առաջնորդել շքերթը, և հավատաս, թե ոչ, Նա էլ եզրափակում է շքերթը: Մենք շրջապատված ենք Նրա հոգատարությամբ:

Նոր կտակարանում ասվում է. «Աստված ձեր կարողությունից վեր փորձություն չի տա»: Եվ ես ձեզ ասել եմ սա հազար անգամ. հունարենում ասվում է, որ Նա հատուկ ձևով կապահովի փախուստի հատուկ ճանապարհ կոնկրետ փորձության համար: Չկա մի փորձություն, որին դու կամ ես հանդիպում ենք, որի համար Աստված մշակած չլինի փախուստի ճանապարհ, այնպես որ մի՛ հուսահատվիր:

Գե՛, եկեք ասենք: Մենք դա չենք ասել այն ժամանակվանից, ինչ տեղափոխվել ենք այստեղ: «Մենք հաջողությամբ անցանք 1986 թվականը: Գավիթն այնպես էր հավատում Աստծուն, որ ապագան դրեց անցյալ ժամանակով: «Մենք հաջողությամբ անցանք 1986 թվականը»: Հիանալի է:

Եվ վերջինը՝ «Եվ ցածունը ուժ ունեն Նրա հավիտենական բազուկները»: Կրկին, այստեղ օգտագործվում է եբրայերեն պատկերավոր բառերից: Կարո՞ղ եք ըմբռնել, թե ինչ է նշանակում «անհատակ»: Ես չեմ կարող, բայց մի փոքր կարող եմ զգալ: Դա չափազանց խորը ճանապարհ է դեպի ներքև:

«Ցածուն»: Եբրայերեն բառը պարունակում է մի վերացական գաղափար, որը իրականում դժվար է ընկալել. որտեղ անհատակությունն է, դրանից ներքև...: Դա նշանակում է, որ եթե դու սայթաքես և իջնես դեպի անհատակություն, որտեղ էլ դա լինի, և ինչ էլ դա լինի, մինչև այդտեղ հասնում են Նրա հավիտենական բազուկները: Հիմա, անհատակությունը պետք է որ բավականին շատ ներքևում գտնվի, և Աստված պետք է բավականին արագ լինի, որ երբ տեսնի մեզ ընկնելիս, կարողանա Իր ձեռքերը տեղափոխել այնտեղ:

Հասկանո՞ւմ եք իմ միտքը: Աստված բավականին արագ է: Ինչ-որ հրեշտակ ասում է. «Հեյ, Մքրտը ընկնում է, և հասարակությունը նրան ոտնատակ է անում: Աստվա՛ծ, ձեռքերդ այս կողմը մեկնի՛ր»: Նրա մոտ դա կստացվի, բայց որպեսզի իմ ապահովությունը մեծանա, ահա իմ խոստումը՝ հավիտենական... երբեք-չտեղաշարժվող... ներքևում, ցածուն, անհատակության մեջ գտնվող հավիտենական բազուկներ:

Դա է պատճառը, որ ես «շնորհք» եմ քարոզում, բարեկամնե՛ր: Ես հոգնել և զգվել եմ այն եկեղեցուց, որը դատապարտում է ամեն մեկին: Սա դժվար ճանապարհ է: Այն ժամանակի խնդիր է, բայց կոշիկները դա հնարավոր կդարձնեն: Կան լավ օրեր և վատ օրեր, բայց՝ «Եվ քո ուժը քո օրերի չափ լինի»: Ապագայի վերաբերյալ կան անորոշություններ, բայց «առջևից գնացող Աստվածը» անկյունում է, և Նա արդեն հարթել է ճանապարհը: Եվ երբ հասնենք այդ օրվան, իսկ դա մեզ համար այսօր է, Նա մեզ ուժ կտա օրը հաջողությամբ ավարտելու համար: Իսկ երբ մենք սայթաքենք, անիծյալ լինեն այդ դատապարտության ջատագովները: Աստծո Խոսքն ասում է. «Եվ ցածունը ուժ ունեն Նրա

հավիտենական բազուկները»: Նրանք երբեք տեղից չեն շարժվում: Արդյո՞ք սա ձեզ չի ուրախացնում:
Հը՞:

Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են